



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2 (075)

S-44



2 0 AUG 2013

220 Մայրաքաղաք - Երևան / լուսագրություն

54-55

03 AUG 2009

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՈՆԻ

2(075) ս

5-44

ԵՒ ՅԱՆՆԵՆՈՒՄՆ

«ԲԱՌԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ»

ԱՌՍՋԻՆ ՏԱՐԻ



ԴԱՍԱԳԻՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՒ ՏՈՒՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐԳՑՆԵՐԻ ՀԱՐՄԱՐ

Կազմեց

ՍՍ.ՀԱ.Կ ԲՍ.Հ. ՏԵՐ-ՅՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆՅ

Կրօնու սոյց Աստուայօյի իզական, Այլեան-
դրայի եւ Օլգայի գիմնագիտների, տրական
կրայիական (ուէտական բաժանմունքով) գիմ-
նագիտի եւ Հայոց ծխական ուսումնորանի:

ԹԻՖԼԻՉ

Էլեքտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկերութեան

1905

(88)

1648

09 AUG 2008

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено цензурою. 7 февраля 1905 г. Тифлисъ.

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԴԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՐ ՍԻՐԵԼԻ

ԱՃԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐԻՆ

ԵՒ ԱՃԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է ՆԱԶՄՈՂԸ:

Կարգադրություն
Հայկական գրականության կենտրոնի
հրատարակած «Իր սիրելի» և «Այլ
հայկական գրականության կենտրոնի»
հրատարակած «Եւ աճակերտներին»
հրատարակած «Եւ աճակերտներին»
հրատարակած «Եւ աճակերտներին»

Վ Ր Ի Պ Ա Կ

Վ Ր Ի Պ Ա Կ

Վ Ր Ի Պ Ա Կ

Վ Ր Ի Պ Ա Կ

Վ Ր Ի Պ Ա Կ

Յառաջաբանի երկրորդ երեսի 16-րորդ տողում սպումած է. «իսկ բառատեորը տպագրուած է առանձին գրքոյկով». պէ՛տ է լինի. «իսկ բառատեորը տպագրուած է սրան կից»:

Ըստ Բարձու հրամանի Նորին Ս. Օծու-
թեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Դի-
ւանս թոյլատրէ տպագրութիւն դասագրք-
ոյս որ ընդ անուամբս «Դասագիրք Կրօնի»
հաստատելով ստորագրութեամբ եւ որոշ-
մամբ կնքոյ Հայրապետական Դիւանի, յ18
Յունւարի 1905 ամի ի Տիփլիս:
Դիւանագիտ Կարին Վարդապետ

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Պետական դպրոցներում ամեն մի հայ կրօնուսույց իւր դասասուութեան ժամանակ հանդիպած կ'իլնի մեծամեծ դժուարութիւնների այն պատճառով, որ աւակերտների մեծ մասը չի իմանում իւր մայրենի լեզուն: Մանաւանդ այդ նկատելի է Հիւսիսային կովկասի դպրոցներում: Ինքս լինելով կրօնուսույց Ասաւրապօլի գիմնազիօսներում՝ բազմիցս նկատել եմ, որ աւակերտներից շատ շատերը չեն կարողանում սովորել դասը—ոմանք գրել կարդալ չիմանալու պատճառով, իսկ շատերը չ'հասկանալով կարդացածը: Մեր դասասուութեան ժամանակ սխալուած ենք եղել սկսնակների հետ անպայման անցնել հայերէն այբուբենը: Տառերը սովորեցնելուց յետոյ—քէ՛ աղօթների եւ քէ՛ տօների համառօտ պատմութիւնները գրաւոր ենք անցել՝ բառատես-

ներում գրել տալով հայերէն խօսքերի ռուսերէն նշանակութիւն, որպէս զի աւակերտները՝ հասկանալով պատմութեան մէջ եղած խօսքերը՝ հետզհետէ աւելացնեն իրանց հայերէն բառերի պաշարը:

Շատ անգամ լսել ենք հայր կրօնուսույցներից, որ բառատեսքով դասագիրքը կարող է բառական դիւրացնել քէ՛ ուսուցչի եւ քէ՛ աւակերտների գործը: Այդ իսկ պատճառով մենք ձեռնարկեցինք սոյն գործին աչքի առաջ ունենալով եղած դասագիրքերը:

Ներկայ դասագիրքը բաղկացած էրմի քանի մասից, սակայն ըստ հրահանգի Հոգեւոր իշխանութեան դուրս են գցուած միւս մասերը, իսկ բառատեսքը տպագրուած է առանձին գրքով:

Բառատեսքում աւելորդ չենք համարել կցել նաեւ հայերէն այբուբենը սկսնակներին փոքր ծանօթութիւն տալու համար:

Ամեն մի յօդուած կամ աղօթք անցնելիս՝ աւակերտը կ'նայէ բառարանում, յօդուածի Ն-ին համապատասխան գլխում, իւր չ'հասկացած բառերի ռուսերէն թարգմանութիւնը:

Մենք աշխատել ենք, որքան հնարաւոր է մասշնչի լեզու գործ ածել, որպէսզի

սկսնակ աւակերսներին հասկանալի լինի:
Ներկայ աշխատութիւնը, իբրև առաջին փորձ, կարող է ունենալ պակասութիւններ: Յանկալի է իմանալ հայր կրօնուսոյցների կարծիքը ապագայում պակասութիւններից զգուշանալու համար:

Մտակ Բահ. Յիր-Յովհաննիսեանց

25-ն դեկտեմբերի 1904 թ.

Ստաւրապոլ:

Ա. Մ Ա Ս

Ա Ղ Օ Թ Ք Ն Ե Ր

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սբբոյ. ամէն:


Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով. ամէն:

2. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի: Չհաց մեր հանապազօրդ սուր մեզ այսօր. թո՛ղ մեզ ըզպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիք զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ն զմեզ ի չարէ. զի

Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի քո անունը. Թո՛ղ զայ Գո թագաւորութիւնը. Գո կամքը լինի, ինչպէս երկրնքումը այնպէս էլ երկրիս վերայ: Մեր այսօր էլ սուր մեզ. մեր պարտքը թո՛ղ մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում. մեզ փորձանքի մէջ

քո է արքայութիւնս և
զօրութիւնս և փառք
յաւիտեանս. ամէն:



մի ձգիր, այլ ազա-
տիր մեզ չարից. ո-
րովհետև քոնն է և՛
թագաւորութիւնը և՛
զօրութիւնը և՛ փառ-
քը յաւիտեանս. ամէն:

3. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՅ ԱՌԱՋ

Ամենաբարի Աստ-
ուած, առաքեալ առ
մեզ զշնորհս Հոգւոյդ
Սրբոյ, զի պարզեցցէ
մեզ զմիտս և կազդու-
րեցցէ զզօրութիւնս
հոգւոյ մերոց, որպէս
զի մեք ընդունելով
զաւանդեալ մեզ ուս-
մունս, զարգասցուք
Քեզ՝ ստեղծողիդ մե-
րում ՚ի փառս ՚ի մխի-
թարութիւն ծնողաց
մերոց, յօգուտ եկե-
ղեցւոյ և Հայրենեաց:

Ամենաբարի Աստ-
ուած, ուղարկիր մեզ
Սուրբ Հոգուդ շնորհ-
քը, որ մեզ միտք
պարզեւէ և զօրացնէ
մեր հոգևոր կարողու-
թիւնները, որպէսզի
մենք ընդունելով մեզ
տուած ուսումը, մե-
ծանանք Քեզ ստեղ-
ծողիդ փառքի՝ մեր
ծնողներին մխիթարե-
լու և եկեղեցուն ու
հայրենիքին օգտակար
լինելու համար:

4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՅ ՅԵՏՈՅ

Գոհանամք զքէն,
Արարիչ, զի արժանի
արարեր զմեզ շնոր-

Շնորհակալ ենք Քե-
զանից, Արարիչ, որ
արժանացրիր մեզ ու-

հաց Քոց՝ ընդունելու-
թեան ուսմանս: Օրհ-
նեա՛ զմեծաւորս,
զծնողս և զուսուցիչս
մեր, որք առաջնոր-
դեն մեզ ՚ի գիտու-
թիւն բարութեան և
տնւր մեզ կարողու-
թիւն ՚ի շարունակու-
թիւն ուսմանս այ-
սորիկ:

սում ստանալու շնոր-
հիդ: Օրհնիր մեր մե-
ծաւորներին, ծնողնե-
րին և ուսուցիչնե-
րին, որոնք առաջնոր-
դում են մեզ դէպի
բարին: Մեզ ոյժ,
կարողութիւն տուր,
մեր այս ուսումը շա-
րունակելու:

5. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՅ ԱՌԱՋ

Աչք ամենեցուն ի
քեզ, Տէր, յուսան և
Դու տաս կերակուր
նոցա ի ժամու. բա-
նաս զձեռն Քո և լը-
ցուցանես զամենե-
սեան քաղցրութեամբ
կամովք Քովք:

Ամենքի աչքերը
Քեզ են նայում, Տէր,
և դու տալիս ես նը-
րանց կերակուր ժա-
մանակին. բաց ես
անում ձեռքդ և լիա-
ցնում ամենքին Քո
ողորմութիւնով:

6. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՅ ՅԵՏՈՅ

Տէր Յիսուս, լցաք
ի բարութեանց Քոց,
տացուք գոհութիւն
տեառն Աստուծոյ մե-

Տէր Յիսուս, լիա-
ցանք Քո բարութիւ-
նով. շնորհակալու-
թիւն անենք մեր Տէր

րոյ՝ Հօր, Որդւոյ և
Հոգւոյն Սրբոյ:

Զլիութիւն սեղա-
նոյս անհատ և աննու-
ազ արասցէ Քրիստոս
Աստուած մեր, որ
զմեզ կերակրեաց և
լիացոյց՝ նմա փառք
յաւիտեանս. ամէն:

Աստուծուն — Հօրը,
Որդուն և Սուրբ Հո-
գուն:

Մեզ կերակրող և
լիացնող Քրիստոս
Աստուածը թնոյ ան-
պակաս անէ այս սե-
ղանի լիութիւնը: Նը-
րան յաւիտեան թնոյ
փառք լինի. ամէն:

7. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր,
կեցն՝ զամենաբարե-
պաշտ թագաւորն և
զկայսերն ամենայն
Ռուսաց զնիկոլայ Ա-
լէքսանդրովիչն: Զո-
րացո զնա. օգնեան
զաւակաց և զօրաց
Նորա՝ պահելով զա-
մենեսին ՚ի խաղա-
ղութեան:

Տէր Աստուած մեր,
կեանք տուր ամենա-
բարեպաշտ թագաւո-
րին և ամենայն Ռու-
սաց կայսր Նիկոլայ
Ալէքսանդրովիչին:
Զօրացրու Նրան, օգ-
նիր Նրա զաւակնե-
րին, զօրքին և ամեն-
քին պահպանիր խա-
ղաղութեան մէջ:


8. ԱՂՕԹՔ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր,
պահեան զՄայր Աթո-

Տէր Աստուած մեր,
պահպանիր մեր Մայր

ուն մեր Սուրբ Էջ-
միածին և զգահակալ
նորին զՏէր Տէր Մը-
կրտիչ սրբազնագոյն
կաթուղիկոսն ՚ի փա-
ռս և ՚ի պարծանս
ազգիս Հայոց:

Աթոռ սուրբ Էջմիա-
ծինը և նրա զահակալ
Տէր Տէր Մկրտիչ
սրբազանագոյն կա-
թուղիկոսին՝ Հայոց
ազգի փառքի ու
պարծանքի համար:





ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀՍՄԱՌՕՏ ՊՍՏՄՈՒ-
ԹԻԻՆՆԵՐԸ

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՆԴԵԱՆ ԱԻԵՏԻՔԸ

Հրէաների Հերովդէս թագաւորի ժա-
մանակ ապրում էր Զաքարիա քահանան՝
իւր Նղիսաբէթ կնոջ հետ: Երկուսն էլ ար-
դար մարդիկ էին: Նրանք ծերացած էին և
զաւակ չունէին. միշտ Աստուծոն աղօթում
էին և զաւակ խնդրում Նրանից: Մի ան-
գամ՝ երբ Զաքարիան տաճարում կատարե-
լով ժամակարգութեան իւր հերթը՝ մտաւ
խորան, նրան երևաց Աստուծոյ հրեշտակը:
Զաքարիան շատ վախեցաւ: Հրեշտակը ա-
սաց. «Մի վախենար, Զաքարիա, աղօթքդ
լսելի եղաւ. կլինդ կ'ծնի որդի, որի անունը
կ'ընես Յովհաննէս: Նա Աստուծոյ համար
ճանապարհ կ'պատրաստէ»: Զաքարիան պա-
տասխանեց. «Ես և կլինս ծերացած ենք,
այդ չէ կարող պատահել»: Հրեշտակը ա-

սաց. «Համր կ'մնաս—մինչև ասածս կ'կատարուի»:

Ժողովուրդը դուրսը աղօթում էր և սպասում: Երբ Չաքարիան խորանից դուրս եկաւ, ոչինչ չէր կարողանում խօսել: Ժողովուրդը հասկացաւ, որ նա տեսիլք է տեսել:

Մի քանի օրից յետոյ Չաքարիան դարձաւ տուն:

2. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Սուրբ կոյս Մարիամը բարեպաշտ ծնողների գաւակ էր: Հօր անունը Յովակիմ էր, իսկ մօր անունը՝ Աննա: Նրանք անգաւակ էին և աղօթում էին Աստծուն, որ մի գաւակ ունենան: Եւ խոստացան—եթէ Աստուած գաւակ պարգևէ—նուիրել Աստծուն: Աստուած նրանց սուրբ կեանքի ու համբերութեան համար՝ արժանացրեց պարգևի: Նոքա ունեցան մի աղջիկ, որի անունը դրին Մարիամ:

Սուրբ կոյս Մարիամի ծննդեան տօնը կատարում ենք սեպտեմբերի 8-ին:

3. ՄԱՐԻԱՄԻ ԸՆԾԱՅՈՒՄՆ ՏԱՃԱՐԻՆ

Երբ Մարիամը երեք տարեկան եղաւ, նրա բարեպաշտ ծնողները շտապեցին կա-

տարել իրանց խոստումը: Կանչեցին ագգաւաններին և աղջկայ ընկերուհիներին—հազցրին նրան նոր շորեր և՛ հոգևոր երգեր երգելով՝ տարան տաճար: Տաճարի մուտքի առաջ սուրբ կոյս Մարիամին դիմաւորեց Չաքարիա քահանայապետը, օրհնեց և Սուրբ Հոգու թելադրութեամբ տարաւ Նրան ուղղակի Սրբութիւն Սրբոցը, ուր ինքը իրաւունք ունէր մտնել տարին մի անգամ միայն:

Յովակիմը և Աննան դարձան տուն, իսկ Մարիամը մնաց տաճարում, որտեղ պարապում էր՝ աղօթքով, ընթերցանութիւնով և ձեռագործով:

Մարիամի տաճարին ընծայման տօնը կատարում ենք նոյեմբերի 21-ին:

4. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱՒԵՏՈՒՄԸ

Մարիամը ապրեց տաճարում 11 տարի: Այդ ժամանակում նրա ծնողները մեռան: Մնալով որբ՝ Նա ամբողջ հոգով սիրեց Աստծուն և ուխտեց միշտ կոյս մնալ: Երբ 14 տարեկան դարձաւ, քահանաները ուղեցին Նրան ամուսնացնել: Բայց երբ իմացան, որ Նա ուխտել է յաւիտեան կոյս մնալ,

յանձնեցին իր ազգական ծերունի Յովսէփին, որ Նրան կերակրէ:

Յովսէփը հարուստ մարդ չէր: Նա ապրում էր Նազարէթ քաղաքում և պարապում էր հիւանութեամբ: Մարիամը Յովսէփի տանը պարապում էր ձեռագործով, ընթերցանութիւնով և աղօթքով:

Մի անգամ, աղօթքի ժամանակ Նրան երևաց Գաբրիէլ հրեշտակը և ասաց. «ուրախացիր, Մարիամ, Աստուած քեզ հետ է»:
Մարիամը վախեցաւ: Հրեշտակը շարունակեց. «Մի վախենար, Մարիամ, Գու Աստծոյ մօտ շնորհ գտար. կ'ծնես որդի, որի անունը Յիսուս կ'ընես. Նա Աստծոյ որդի կ'կոչուի»: Մարիամը խոնարհութեամբ ընդունեց աւետումն և հրեշտակը հեռացաւ Նրանից:

Աւետման տօնը կատարում ենք ապրիլի 7-ին

5. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՁԻ ԾՆՈՒՆԴԸ

1. Հրեշտակի ասածի համաձայն՝ Եղիսաբէթը մի որդի ծնեց: Ութերորդ օրը պէտք է երեխային անուն տային: Կասենում էին անուանել հօր անունով՝ Զաքարիա, բայց մայրը հակառակ էր. Նա կամենում էր, որ երեխայի անունը Յովհաննէս զնեն:



Նշաններով դիմեցին Զաքարիային, ասէ, թէ ինչ է լինելու երեխայի անունը: Զաքարիան պահանջեց մի տախտակ և գրեց. — «Յովհաննէս է սրա անունը»: Իսկոյն Զաքարիայի պապանձուած լեզուն բացուեց, և Նա սկսեց բարձրաձայն փառաբանել Աստծուն:

Յովհաննէս Մկրտչի ծնունդը կատարում ենք յունուար ամսին:

2. Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնները. Յովհաննէսը վարում էր սուրբ կեանք: Զրկուելով իր ծնողներից՝ Նա մատաղ հասակից գնաց անապատ, որտեղ ժամանակը անց էր կացնում պահեցողութիւնով և աղօթքով: Նրա հագուստը ուղտի բրդից էր, իսկ գօտին կաշուից: Կերակուրը մարախ և վայրենի մեղր էր: Երբ նա երեսուն տարեկան դարձաւ, սկսեց Յորդանան գետի մօտ քարոզել՝ ասելով. — «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը»: Չորս հարիւր տարուց աւել հրէաների մէջ Մարգարէ չէր երևացել: Նրանք սիրով դալիս էին Յովհաննէսի մօտ, Նրա քարոզները լսում, զղջում իրանց մեղքերը և մկրտւում Նրանից Յորդանան գետի մէջ:

6. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հէրովդէսի թագաւորութեան ժամանակ
 Հրէաստանը գտնուում էր Հռովմայեցւոց իշ-
 խանութեան տակ: Հռովմայեցւոց կայսրը,
 կամենալով իմանալ իւր հպատակներին թիւը,
 հրամայեց ցուցակագրել նրանց: Իւրաքան-
 չիւր հրէայ պէտք է գրուէր այն քաղաքում,
 որտեղ որ ծնուել են իւր նախնիքները:
 Յովսէփն ու Մարիամը՝ Դաւթի ցեղիցը լի-
 նելով՝ գնացին Բէթղէհէմ: Բէթղէհէմում
 այդ ժամանակ շատ մարդ կար: Քաղաքում
 նրանք բնակարան չ'կարողացան գտնել և
 պատապարուեցին քաղաքից դուրս մի այ-
 րում, որտեղ վատ եղանակներին հովիւները
 պահում էին իրանց ոչխարները:

Այստեղ գիշերը, Սուրբ Կոյս Մարիամը
 ծնեց Յիսուսին, որին փաթաթեցին խան-
 ձարուրով և դրին մսուրի մէջ:

Այդ ժամանակ Բէթղէհէմի այրին մօտ
 գտնուում էին հովիւները իրենց ոչխարներով:
 Յանկարծ նրանց երևաց սի հրեշտակ՝ շքե-
 շապատուած անսովոր լուսով: Հովիւները
 վախեցան: Հրեշտակն ասաց. «Մի՛ վախենաք
 ես ձեզ և բոլոր մարդկանց մեծ ուրախու-

թիւն եմ աւետում. Բեթղէհէմում ձեզ հա-
 մար փրկիչ ծնուեց. մանկանը կ'գտնէք խան-
 ձարրով փաթաթած և մարի մէջ դրած»:
 Հրեշտակը իւր խօսքը դեռ չ'վերջացրած՝
 յայտնուեցին ուրիշ շատ հրեշտակներ, որոնք
 հնչեցնում էին օղբ երգով. «Փառք Բարձրեալ
 Աստծուն, երկրի վերայ խաղաղութիւն,
 մարդկանց մէջ ուրախութիւն»:

Հովիւները գնացին այրը և այնտեղ
 գտան ս. Կոյս Մարիամին, Յովսէփին և
 Մանկանը: Երկրպագելով նորածինին՝ նրանք
 Յովսէփին ու Մարիամին պատմեցին այն
 ամենը, ինչ տեսան և լսեցին հրեշտակնե-
 րից:

Քրիստոսի ծնունդը կատարում ենք յուն-
 վարի 6-ին.

7. ՔԱՌԱՍՍՈՒՆ ՕՐԱԿԱՆ ՅԻՍՈՒՄԻՆ ՏԱՆՈՒՄ
 ԵՆ ՏԱՃԱՐ

Հրէաները երեխայի ծնունդից ութ օր
 յետոյ անուն էին դնում: Երբ մանուկ Յի-
 սուսը ութ օրական եղաւ, Նրա անունը դրին
 Յիսուս, ինչպէս ասել էր Գաբրիէլ հրեշտա-
 կապետը Մարիամին:

Քառասներորդ օրը երեխային պէտք է

տաճար տանէին: Ըստ սովորութեան անդրանիկ արու զաւակների ծնողները՝ մատաղ էին անում: Հարուստները տանում էին մի հորթ կամ ոչխար, իսկ աղքատները՝ մի զոյգ աղաւնի: Մարիամը ու Յովսէփը աղքատ էին. այդ պատճառով նրանք մի զոյգ աղաւնի տարան:

Այդ ժամանակ Երուսաղէմում ապրում էր մի ծերունի քահանայ՝ Սիմէօն անունով: Սիմէօն ապրեց մօտ 300 տարի: Նա արդար և երկիւղած մարդ էր և ամբողջ հոգևով սպասում էր Փրկչին: Նրան Սուրբ Հոգին ասել էր, որ նա չի մեռնի մինչև չտեսնի Յիսուսին:

Երբ Յիսուսին բերին տաճար՝ Սիմէօնն էլ եկաւ և Աստուծոյ թելադրութեամբ մտաւ տաճար. նա զիբկն առաւ մանկանը և ասաց. «Այժմ, Տէր, թող որ ես հանգիստ մեռնեմ, որովհետև իմ աչքերովս տեսայ Փրկչին»: Ապա օրհնեց Յովսէփին ու Մարիամին: Այս դէպքի համար Սիմէօնը կոչուում է Աստուածընկալ:

Տաճարում ապրում էր նաև մի ութսուն չորս ամեայ սյրի կին՝ Աննա անունով: Սա եօթը տարի ապրեց իւր ամուսնու մօտ, իսկ յետոյ բոլոր ժամանակը ծառայում էր

Աստուծոն՝ չհեռանալով տաճարից: Իւր ջերմեռանդութեան համար Աստուած արժանացրեց Փրկչի տեսութեանը: Աննան փառաբանում էր Աստուծոն և յայտնում էր Քրիստոսի ծնուիլը ամենքին Երուսաղէմում:

(Այս տօնը կատարում ենք փետրվարի 14-ին և կոչուում է Տեսնելնդառաջ)

8. ՅԻՍՈՒՍԻ ՄԿԻՏՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Հոգին հրամայեց անապատում ապրող Յովհաննէսին, որ զնայ Յորդանանի կողմերը և այնտեղ քարոզէ: Չորս հարիւր տարուց աւել հրէաները մարգարէ չէին ունեցել և այդ պատճառով անպիսի բազմութիւն՝ շրջակայ քաղաքներեց և Երուսաղէմից գալիս էին նրա քարոզները լսելու: Յովհաննէսի զորդացնող քարոզները նրանց սրտերը շարժում էին: Շատերը անկեղծ զոջում էին իրանց մեղքերը և մկրտուում նրանից Յորդանան գետի մէջ:

Երբ Յովհաննէսը՝ Յորդանան գետի ափերին քարոզում և մկրտում էր մարդկանց՝ Յիսուս Գրիստոսը երեսուն տարեկան զարձաւ: Ուրիշ շատ հրէաների հետ Յիսուսն էլ զնայ Յովհաննէսի մօտ մկրտուելու: Թէև

Յովհաննէսը ազգական էր Յիսուսին, սակայն Նրան չէր տեսած և չէր ճանաչում. բայց երբ Յիսուսը գալիս էր, նա Սուրբ Հոգոյ շնորհիւ իսկոյն ճանաչեց Նրան: Յովհաննէսը անարժան էր համարում իրան մկրտել Ասածոյ որդուն և ասաց. «Ե՛ս պէտք է քեզանից մկրտուեմ, Դո՛ւ ես ինձ մօտ գալիս»:

Յիսուսն ասաց. «Մկրտի՛ր ինձ, որովհետեւ մենք պէտք է կատարենք այն ամենը՝ ինչ Աստուած հրամայել է: Քեզ Աստուած հրամայեց մկրտել մարդկանց, պէտք է մկրտես և ինձ: Ես եկայ ո՛չ թէ օրէնքը բանդելու՝ այլ լրացնելու»: Յովհաննէսը մկրտեց Յիսուսին: Ուրիշները մկրտուելու ժամանակ խոստովանւում էին իրանց մեղքերը, իսկ Յիսուսը իսկոյն դուրս եկաւ ջրից, որովհետեւ անմեղ էր:

Երբ Յիսուս ջրից դուրս եկաւ, յանկարծ երկինքը բացուեց: Յովհաննէսն ու բոլոր ժողովուրդը տեսան Սուրբ Հոգուն աղանու կերպարանքով իջնելիս Յիսուսի վերայ: Լսուեց Հայր Աստուծոյ ձայնը, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցայ»:

Յիսուսի մկրտութիւնը կոչւում է նաև Յայտնութիւն, որովհետև այդ ժամանակ յայտնուեց մարդկաց Սուրբ Երրորդութիւնը — Հայր Աստուած, Որդի Աստուած և Սուրբ Հոգի Աստուած:

Քրիստոսի մկրտութեան տօնը կատարում ենք յունվարի 6-ին:

9. ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՇՔԸ ԿԱՆԱ ՔԱՂԱՔՈՒՄ

Նազարէթից ոչ հեռու գտնւում էր Կանա քաղաքը: Այս քաղաքում հարսանիք կար, որտեղ հրաւիրուած էին Յիսուս Քրիստոսը, Մայրը և աշակերտները: Փեսան խեղճ մարդ էր և բաւական գինի չունէր իւր հիւրերին հիւրասիրելու համար: Նկատելով այս՝ Աստուածամայրը ասաց Յիսուսին. «Գինի չունին»: Այս խօսքերով նա խնդրում էր Յիսուսին, որ օգնէ խեղճերին՝ չ'կամենալով, որ նորապսակները տխրեն իրանց կեսաբի ամենուրախ օրը: Յիսուսն ասաց. «Դեռ հրաշքներ կատարելու ժամը չէ հասել»:

Մարիամը ծառաներին պատուիրեց անել այն ամենը, ինչ որ Յիսուս հրամայէ: Դռների մօտ դրուած էին վեց դատարկ սափորներ: Յիսուսը պատուիրեց լցնել սա-

փորձները ջրով: Երբ լցրին, հրամայեց տանել սեղանի կառավարչի մօտ. ծառաները կատարեցին հրամանը: Երբ կառավարիչը գինու համը տեսաւ, շատ հաւանեց և դառնալով փեսային՝ ասաց. «Ամեն մարդ առաջ լաւ գինի է բերում, իսկ յետոյ, երբ հիւրերը արբում են,—վատ, իսկ դու առաջ՝ վատը բերիր, ապա—լաւը»: Փեսան չ'գիտէր, թէ լաւ գինին որտեղից էր, գիտէին միայն ծառաները:

Այս Յիսուսի առաջին հրաշքն էր, որով փառավորեց իրան, և Նրա աշակերտները հաւատացին Նրան:

10. ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մի անգամ Քրիստոս Կափառնաուսից գնում էր Նային քաղաքը: Նրա հետ էին իւր աշակերտները և շատ ժողովուրդ: Երբ քաղաքի դռներին մօտեցաւ, տեսաւ, որ տանում են թաղելու մէկ երիտասարդի, որը մի այրի կնոջ միակ զաւակն էր: Խեղճ կինը լալով գնում էր դադաղի ետևից: Յիսուսը խղճաց մօրը և ասաց. «Մի լար»: Ապա դառնալով հանդուցեալին ասաց. «Պատանի, քեզ եմ ասում, վեր կաց»: Ննջեցեալը իս-

կոյն վեր կացաւ, նստեց և սկսեց խօսել: Ներկայ եղողները՝ այս հրաշքը տեսնելով՝ շատ վախեցան. սկսեցին փառք տալ Աստուծուն և ասել. «Մեծ մարգարէ է յայտնուել մեր մէջ, Աստուած իւր ժողովրդին այցելութիւն արաւ»:

11. ԾԱՂԿԱԶԱՐԴ

Զատկից վեց օր առաջ Քրիստոսը գնաց Երուսաղէմ. Նրա հետ էին Նրա աշակերտները և շատ ժողովուրդ: Գալով Զիթենեաց սարը՝ Յիսուս իւր աշակերտներից երկուսին ասաց. «Գնացէք մօտակայ գիւղը. այնտեղ կը գտնէք մի աւանակ, որի վերայ գեռ ոչ ոք չի նստել, և բերէք այստեղ»: Աշակերտները բերին աւանակը, փռեցին վերան իրանց շորերը և Յիսուսը նստեց:

Լուր տարածուեց, թէ Յիսուս գալիս է Երուսաղէմ. Նրա գլխաց գօլբոս եկաւ ահագին բազմութիւն: Ժողովրդից շատերը իրանց շորերը փռում էին աւանակի ոտքերի տակ, իսկ միւսները ձիթենու և արմաւենու ճիւղեր էին կտրատում և ձգում ճանապարհի վերայ: Ուղեկցող և պատահող ժողովուրդը երգում էր. «Ովսաննա Դաւթի որդուն,

օրհնուած է Աստուծոյ անուշով եկող թագա-
ւորը, Ովսաննա բարձրումը»:

Երբ մտաւ Երուսաղէմ՝ ամբողջ քա-
ղաքը դղրդաց. Յիսուսին չճանաչողները
հարցնում էին. «Ով է սա». Ժողովուրդը
պատասխանում էր. «Սա է Նազարէթից
եկած Յիսուս մարգարէն»: Մտնելով տա-
ճար՝ Գրիստոսը բոլոր վաճառականներին
դուրս արաւ: Յիսուսի մօտ գալիս էին շատ
հիւանդներ և Նա բժշկում էր նրանց: Երե-
խաները տեսնելով, թէ ինչպէս իրանց
ծնողները փառաբանում են Յիսուսին, իրանք
էլ սկսեցին աղաղակել—«Ովսաննա Դաւթի
որդուն»:

Ծաղկազարդի տօնը կատարում ենք Չատ-
կից մի շաբաթ առաջ:

12. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Չատկից մի քանի օր առաջ դպիրներ-
ըր և փարիսեցիները հաւաքուեցին կայա-
փա քահանայապետի մօտ և մտածում էին,
թէ ինչպէս կորցնեն Յիսուսին: Վճռեցին
խորամանկութեամբ բռնել Նրան, միայն ոչ
տօներին, որ ժողովրդի մէջ խռովութիւն
չընկնի: Այդ ժամանակ երևաց Յուդան, Յի-

սուսի 12 աշակերտներից մէկը, և ասաց.
«Ի՞նչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ
մատնեմ»: Նրանք առաջարկեցին 30 ար-
ծաթ. Յուդան համաձայնուեց և յարմար ժա-
մանակ էր որոնում Յիսուսին մատնելու:

Այս դէպքը Ծաղկազարդից 4 օր յետոյ էր:

13. ՈՏՆԱԼՈՒՍՅ

Չատկից երեք օր առաջ, հինգշաբթի
առաւօտեան, աշակերտները հարցրին Յի-
սուսին. «Տէր, սրտեղ կը հրամայես պատե-
քը տօներ». Նա ասաց. «Գնացէք Երուսա-
ղէմ. այնտեղ կը պատահի ձեզ մի ջրկիր
մարդ. հետևեցէք նրան և ասացէք այն տան
տիրոջ, ում տուն որ նա կը մտնի—վար-
դապետը ասաց, սրն է այն սենեակը, որ-
տեղ աշակերտներիս հետ պէտք է Չատիկը
տօնեմ: Նա ցոյց կը տայ ձեզ մեծ սենեակ,
—այնտեղ պատրաստեցէք»: Աշակերտները
գնացին և, ինչպէս Յիսուսն ասաց, այնպէս
էլ արին: Երեկոյեան Յիսուս 12 աշակերտ-
ների հետ սեղան նստաւ: Ընթրիքի ժամա-
նակ Նա վեր կացաւ, հանեց վերևի շորերը,
մի սրբիչ կապեց և սկսեց աշակերտների

ոտները լուանալ աւագանի (կոնք) մէջ և սրբել:

Այս նրանց խոնարհութեան օրինակ ցոյց տալու համար արաւ: Աշակերտների ոտները լուանալուց յետոյ՝ հագաւ շորերը և ասաց. «Ձեզանից մէկը ինձ պիտի մատնէ»: Այս խօսքերը ապշեցրին աշակերտներին. նորա զարմացած իրար էին նայում և ամեն մէկը հարցնում էր Յիսուսին. «Տէր մի՞թէ ես եմ»: Յիսուսի ամենասիրելի աշակերտ Յովհաննէսը մօտեցաւ Յիսուսին և ցածր ձայնով հարցրեց. «Տէր, ո՞վ է մատնիչը»: Յիսուս պատասխանեց. «Որին հացի կտոր կը տամ, նա է»: Ապա մի պատառ թաթախելով ամանի մէջ՝ տուաւ Յուդային: Յուդան իսկոյն դուրս գնաց: Աշակերտները ոչինչ չհասկացան և չիմացան, թէ ո՞վ է մատնողը. նրանք կարծեցին թէ Յիսուսը Յուդային գործի ուղարկեց:

(Ոտնալուայի տօնը կատարում ենք ամեն տարի աւագ հինգշաբթի երեկոյեան):

14. ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Յիսուս՝ վերջացնելով ոտնալուան՝ սկսեց կատարել հաղորդութեան սուրբ հագոր-

դը: Նա վերցրեց հացը, օրհնեց, կտրեց, տուեց աշակերտներին և ասաց. «Առէք, կերէք, այս է իմ մարմինը»: Յետոյ վերցրեց բաժակը, շնորհակալութիւն արաւ Աստծուն, օրհնեց, տուեց աշակերտներին՝ ասելով, «Մտնեցէք սրանից ամենքդ, սա է իմ արիւնը, որ թափուում է ձեր մեղքերի թողութեան համար»:

Երբ աշակերտները ճաշակեցին հացը և խսեցին զինին, Յիսուս ասաց. «Այս արէք իմ յիշատակին»: Ընթրիքից յետոյ Յիսուս իւր աշակերտներին հետ՝ սաղմոսներ երգելով՝ գնաց Ձիթենեաց սարը:

15. ՅԻՍՈՒՍԻ ՀՈԳԵԿԱՆ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԸ

Յիսուս իւր աշակերտների հետ գնաց Ձիթենեաց սարը: Երբ Գեթսեմանի պարտէզին մօտեցան, Նա իւր աշակերտներին թողեց այդու դռան մօտ, իսկ ինքը Պետրոսի, Յակովբոսի և Յովհաննէսի հետ մտաւ այգի: Այստեղ սկսուեցին Նրա հոգեկան տանջանքները: Յիսուսը ասաց. «Հոգիս մահու չափ տխուր է. կացէք այստեղ և ազօթեցէք»: Մի փոքր նրանցից հեռանալով Նա սկսեց աղօթել: Աղօթքի ժամանակ Նա

ծունկ չոքեց: Երեսի վրայ ընկաւ և ասաց. «Հայր, եթէ կարելի է, այս դառը բաժակը հեռացրու ինձանից, բայց ոչ ինչպէս ես եմ կամենում, այլ որպէս Դու»: Ապա դաբձաւ աշակերտների մօտ. նրանց քնած գտաւ և ասաց. «Արթուն կացէք, որ փորձութեան մէջ չընկնէք». իսկ ինքը գնաց դարձեալ աղօթելու:

Այսպէս երեք անգամ կրկնեց իր աղօթքը և երեք անգամ էլ աշակերտներին քնած գտաւ: Վերջին անգամ, երբ աշակերտներին զարթեցնում էր, Յուզան մտաւ բազմաթիւ զինուորներով և ծառաներով: Նրանք Յիսուսին չէին ճանաչում. Յուզան ասել էր. «Որին համբուրեմ, նրան բռնեցէք»: Ապա մօտենալով Յիսուսին ասաց. «Բարև, վարդապետ», և համբուրեց Նրան: Յիսուս ասաց. «Յուզա, համբուրելով ես ինձ մասնում»:

Զինուորները մօտեցան Յիսուսին: Աշակերտները կամեցան սաշտպանել իրանց ուսուցչին, բայց Յիսուս արգելեց և ինքը կամաւոր իրան տուեց նրանց ձեռքը:

16. ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ

Մութ գիշեր էր: Դատաւորները հաւաքուել էին Կայափաքահանայապետի մօտ: Բերին այստեղ և Յիսուսին: Կանչել էին շատ սուտ վկաներ, ոչ ոք Յիսուսի մասին վատ չասաց: Կայափան հարցրեց. «Ինքդ ասան, դու ես Յիսուսը, Աստուծոյ որդին»: Յիսուս պատասխանեց. «Ես եմ»: Լսելով այս խօսքերը՝ Կայափան պատուեց իւր հանդերձները և ասաց. «Ինչ կարիք կայ վկաների. ինքներդ անձամբ լսեցիք, որ սա Աստծուն անարգեց»: Բոլորը միաձայն ասացին. «Մահուան արժան է»:

Թէև քահանայապետները Յիսուսին մահուան դատապարտեցին, սակայն իրանք չէին կարող իրանց վճիռը զործազրել: Այդ պատճառով ուրբաթ առաւօտը Յիսուսին բերին Պիղատոս դատաւորի մօտ: Պիղատոսը Յիսուսին անմեղ գտաւ և կամենում էր արձակել, բայց ժողովուրդը, քահանայապետների զրգմամբ, պահանջում էր Նրա մահը: Որպէս զի թշնամիների չար մաքերը հանդարտեցնի, Պիղատոսը հրամայեց ծեծել Յիսուսին: Զինուորները հանեցին Նրա շորերը, կապեցին սիւնից և կաշուէ գօտիներով

ծեծեցին: Աւելի ծաղրելու համար՝ Նրան հազցրին կարմիր հանդերձ և գլխին գրին փշեայ պսակ. թագաւորական դաւադանի տեղ էլ ձեռքը տուին հասարակ փայտ: Ամեն տեսակ անարգանքներ թափեցին Յիսուսի գլխին. թակում և թքում էին երեսին. վերցնելով Յիսուսի ձեռքից փայտը՝ խփում էին գլխին: Բոլորովին արիւնաթաթախ, կարմիր զգեստը և փշեայ պսակը գլխին՝ Պիղատոսը Յիսուսին դուրս բերեց ժողովրդի առաջ՝ կարծելով, թէ ժողովուրդը կը խղճայ Յիսուսին: Ժողովուրդը աւելի կատաղելով՝ աղաղակում էր. «Սաչի՛ր դրան, եթէ արձակես, կայսեր բարեկամ չես»:

Տեսնելով, որ ժողովրդի մէջ խառնակութիւնը աւելի սաստկանում է՝ Պիղատոսը Յիսուսին յանձնեց նրանց՝ խաչելու:

17. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Զինուորները Յիսուսին տարան Գողգոթա սարը և այնտեղ երկու աւազակների հետ խաչեցին: Նրա գլխի վերև, Պիղատոսի հրամանով, ամրացրին մի տախտակ հետևեալ գրութեամբ—«Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»: Սաչուելու ժամանակ Յիսուս աղօ-

թում էր իւր թշնամիների համար. «Հայր, ներիր սրանց, որովհետև չգիտեն, թէ ինչ են անում»: Այդ ժամանակ ժողովուրդը կանգնած նայում էր: Վիրաւորանքները և ծաղրը շարունակւում էին: Քահանաները և դպիրները ասում էին. «Ուրիշներին փրկում էր, իսկ Իրան չի կարողանում փրկել. թող Քրիստոսը իջնի խաչից և մենք կը հաւատանք»: Նոյնը ասում էին զինուորները և ժողովուրդը: Միայն Յիսուս Քրիստոսին Աստծոյ որդի ընդունեց խաչուած աւազակներից մէկը և դառնալով Յիսուսին՝ ասաց. «Տէր, յիշի՛ր ինձ, երբ Քո թագաւորութեամբ գաս»: Յիսուս պատասխանեց. «Այսօր. ինձ հետ դրախտում կը լինիս»:

18. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԸ

Յիսուս Քրիստոսին խաչեցին ժամը 6-ին (մեր հաշուելով տասներկուսին): Այդ ժամանակ յանկարծ արևը խաւարեց: Ժամը 9-ին Յիսուսի չարչարանքները սաստկացան: Անտանելի շոգը և սաստիկ ծարաւը Նրան բոլորովին ուժաթափ էին արել: Յիսուսը ասաց. «Ծարաւ եմ»: Զինուորներից մէկը սպունգը քացախի մէջ թաթախեց և մօտե-

ցրեց Յիսուսին: Յիսուսը ճաշակելով քացախը՝ ասաց. «Հայր, հոգիս ձեռքդ եմ աւանդում»: Ապա գլուխը խոնարհեցրեց և աւանդեց հոգին: Այդ միջոցին տաճարի վարագոյրը պատառուեց վերևից մինչև ներքև, և երկիրը այնպէս շարժուեց, որ ժայռերը պատառուեցան և արդարներից շատերը գերեզմաններից դուրս եկան: Հարիւրապետը և ներկայ եղող զինուորները տեսնելով այս՝ ասացին. «Ճիշտ որ այս մարդը Աստուծոյ որդի էր»: Գողգոթայում եղող հրէաները տխուր գնում էին տուն և զզջալով իրանց արածի մասին՝ հարուածում էին կրծքերը:

Հետևեալ օրը շաբաթ էր. հրէաները չէին կամենում թողնել մարմինները խաչի վրայ: Նրանք խնդրեցին Պիղատոսին, որ թոյլ տայ խաչուածների սրունգները ջարդել, որ շուտ մեռնին: Պիղատոսը թոյլ տուեց: Զինուորները աւազակների սրունգները ջարդեցին:

Զինուորներից մէկը կամենալով հաստատ իմանալ Յիսուսի մահը՝ նիզակով Նրա կողը ծակեց, որտեղից արիւն և ջուր դուրս եկաւ:

19. ԹԱՂՈՒՄՆ

Յիսուսի ծածուկ աշակերտների մէջ կար Յովսէփ անունով մի արդար և երկիւղած մարդ: Ուրբաթ օրը երեկոյեան նա եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց, որ թոյլ տայ Յիսուսի մարմինը վերցնել խաչից և թաղել: Պիղատոսը, հարիւրապետից տեղեկանալով Յիսուսի մահը՝ թոյլատրեց, որ թաղեն: Յովսէփը վերցրեց կտաւ և գնաց Գողգոթա: Եկաւ այստեղ Յիսուսի ծածուկ աշակերտներից նաև մի ուրիշը, Նիկողիմոս անունով՝ բերելով հետը զանազան անուշահոտ իւղեր: Նրանք Յիսուսին խաչից իջեցրին, մարմինը իւղով օծեցին, կտաւով փաթաթեցին ու դրին Յովսէփի այգում, նոր պատրաստած գերեզմանի մէջ, որի մուտքը ծածկեցին մի մեծ քարով:

Քահանաները և դպիրները՝ երկիւղ կրելով, թէ Յիսուսի աշակերտները կարող են գիշերը գողանալ Նրա մարմինը և յետոյ ասել, թէ յարութիւն առաւ՝ շաբաթ առաւօտը եկան Պիղատոսի մօտ և ասացին. «Յիշեցինք, որ Յիսուսը ասում էր, թէ երեք օրից յետոյ պէտք է յարութիւն առնեմ. հրամայիր գերեզմանը պահպանել մի քերեք

օր»։ Պիղատոսը հրամայեց։ Նրանք պահապաններ կանգնացրին գերեզմանի մօտ, իսկ քարը կնքեցին։

20. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուս Քրիստոս իւր մահից երեք օր յետոյ վաղ առաւօտեան յարութիւն առաւ։ Աստծոյ հրեշտակը երկնքից իջնելով՝ գլորեց գերեզմանի քարը և վրան նստեց։ Հրեշտակի շորերը սպիտակ էին, ինչպէս ձիւն։ Պահապան կանգնած զինուորները մահու չափ վախեցան։ Ապա գալով քաղաք՝ քահանայապետներին պատմեցին այն ամենի մասին, ինչ տեսան։ Քահանայապետները և ժողովրդի ծերերը զինուորներին կաշառք խոստացան՝ ասելով. «Ասացէք ամենքին, որ մինչ դուք քնած էիք՝ Յիսուսի աշակերտները գիշերը եկան և գողացան Նրա մարմինը»։ Զինուորները ստանալով կաշառքը՝ արին այնպէս, ինչպէս իրանց սովորեցրել էին։ Վաղ առաւօտեան Մարիամ Մագլթաղենացին, մի քանի բարեպաշտ կանանց հետ, գնաց Յիսուսի գերեզմանի մօտ։ Նրանք իրանց հետ վերցրել էին անուշահոտ իւղեր, որ Յիսուսի մարմինը օծեն։

Մարիամ Մագլթաղենացին առաջինը մօտեցաւ գերեզմանին։ Տեսնելով գերեզմա-

նի քարը գլորած՝ նա սարսափահար դարձաւ քաղաք, Պետրոս և Յովհաննէս աշակերտներ ի մօտ, և ասաց. «Տիրոջը գերեզմանից հանել են և չգիտեմ ուր են դրել»։ Լուսաբացին եկան և միւս կանայք՝ դարձեալ իւղեր բերելով։ Նրանք գերեզմանի աջ կողմը տեսան նստած մի պատանի, սպիտակ շոր հագած։ Նա ասաց. «Յիսուս Նազովրեցո՞ւն էք փնտրում։ Նա այստեղ չէ, յարութիւն առաւ։ Գնացէք, ասացէք աշակերտներին, որ Նա կը պատահէ նրանց Գալիլիայում»։ Կանայք գնացին։ Պետրոս և Յովհաննէս աշակերտները Յիսուսի անյայտանալը լսելով Մարիամից՝ շտապեցին գերեզման, բայց գտնելով այնտեղ միայն կտաւը՝ դարձան տուն։

21. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐՁՈՒՄԸ

Յիսուս Քրիստոսը իւր Յարութիւնից յետոյ՝ քառասուն օր մնաց երկրիս վրայ։ Այդ ժամանակ երբեմն Նա երևում էր իւր աշակերտներին և սովորեցնում, թէ ինչպէս պէտք է աւետարանը քարոզել բոլոր մարդոց։ Վերջին անգամ Նա երևաց քառասներորդ օրը Յարութիւնից յետոյ և ասաց. «Երուսաղէմից չհեռանաք, մինչև Հայր Աստծուց

գօրուծիւն չստանաք. Մի քանի օրից յետոյ դուք Սուրբ Հոգւով մկրտուած կը լինէք»: Ապա աշակերտներին մի քանի խրատներ տալով՝ Երուսաղէմից տարաւ Չիթենեաց սարը:

Այստեղ՝ բարձրացնելով ձեռքը՝ Նա օրհնեց նրանց և համբարձաւ երկինք: Մի լուսաւոր ամպ բոլորովին ծածկեց նրան աշակերտներից: Երկար ժամանակ նրանք կանգնած նայում էին. յանկարծ երևացին երկու հրեշտակ և ասացին. «Գալիլիացի մարդիկ, ի՞նչ էք կանգնել և երկինք նայում: Յիսուսը, որ համբարձաւ երկինք, նորից կը գայ աշխարհ այնպէս, ինչպէս տեսաք Համբարձման ժամանակ»:

Առաքեալները ուրախ դարձան Երուսաղէմ՝ գովելով և փառաբանելով Աստծուն:

(Այս տօնը կատարում ենք Զատիկից քառասուն օր յետոյ),

22. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Յիսուսի Համբարձումից յետոյ աշակերտները Չիթենեաց սարից դարձան Երուսաղէմ. այստեղ նրանք շարունակ միասին էին լինում: Նրանք հաւաքւում էին մի վերնատան մէջ և իրանց ժամանակը անց էին

կացնում աղօթքով՝ անհամբեր սպասելով մի իթարիչ Սուրբ Հոգուն: Զատիկից յիսուն օր յետոյ՝ բոլոր աշակերտները միասին վերնատանն էին: Առաւօտուայ 9-ը ժամին նրանք երկնքից սաստիկ փշող քամունման ձայներ լսեցին: Իւրաքանչիւր առաքեալի վրայ իջաւ կարմիր հրեղէն լեզու: Առաքեալները ներշնչուեցին Սուրբ Հոգւով և սկսեցին դանազան լեզուներով խօսել:

Այդ ժամանակ տօնի պատճառով, դանազան կողմերից ահագին բազմութիւն էր հաւաքուել Երուսաղէմ: Սոքա բոլորը հաւաքուեցին առաքեալների մօտ և տեսնելով նրանց օտար լեզուներով խօսելը՝ դարմանում էին: Պետրոս առաքեալը դստնալով ժողովրդին՝ ասաց. «Այս Սուրբ Հոգու պարգևն է, որ հրէաների ձեռքով խաչուած և ապա յարուծիւն առած Յիսուս Բրիստոսը ուղարկեց մեզ»:

Հրէաները զղջացին իրանց արածի վրայ և ասացին. «Ի՞նչ անենք»: Պետրոսը ասաց. «Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յիսուս Բրիտոսի անունով ու կը ստանաք Սուրբ Հոգու շնորհը»:

Հէնց այդ օրը 3000 մարդ հաւատաց Յիսուսին և մկրտուեց:

Սուրբ Հոգու գալուստից յետոյ՝ առաքեալները գնացին զանազան կողմեր քարոզելու Յիսուս Քրիստոսի մասին:

Այս տօնը կատարում ենք Համբարձումից տասն օր յետոյ:

23. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԵՐԱՓՈՅՈՒՄԸ

Յիսուս Քրիստոսի Համբարձումից յետոյ՝ Սուրբ Կոյս Մարիամը մինչև մահը, 16 տարի ապրեց Երուսաղէմում, Յովհաննէս աւետարանչի մօտ: Նա քրիստոնէաներին սովորեցնում էր բարի և երկիւղած կեանք, ամբացնում էր իրանց հաւատի մէջ և մխիթարում վշտերի ու անբախտութիւնների ժամանակ:

Մարիամի մահից մի քանի օր առաջ Գաբրիէլ հրեշտակապետը եկաւ և յայտնեց նրա մահը: Սուրբ Կոյս Մարիամի ցանկութեամբ Սուրբ Հոգին հաւաքեց բոլոր առաքեալներին Երուսաղէմ: Հէնց մահուան րօպէին սի անսովոր լոյս պատեց նրա տունը. երեսց ինքը՝ Յիսուսը:

Առաքեալները Աստուածաւոր սուրբ մարմինը փառաւոր հանդէսով տարան Գեթսեմանի պարտէզը և թաղեցին իւր ծնող-

ների և արգար Յովսէփի գերեզմանների մէջ տեղը: Թաղման ժամանակ Բարդուղիմէոս առաքեալը չկար: Նա եկաւ Երուսաղէմ թաղումից երեք օր անց և կամեցաւ գոնէ երկրրպագել նրա ս. մարմինը: Գագաղը բաց արին, բայց մարմինը չգտան: Առաքեալները շատ զարմացան:

Յանկարծ օգոււմ երկաց Աստուածամայրը հրեշտակների հետ և ապաց շուարած առաքեալներին. «Ուրախացէք, այսուհետև միշտ աղօթարար կը լինեմ և Աստուածանից կը խնդրեմ որդուս հաւատացեալների բոլոր խնդիրները կատարել»:

Առաքեալները ուրախութեամբ դարձան Երուսաղէմ:

Վերափոխման տօնը կատարում ենք օգոստոս ամսին:

24. ԳԻՒՏ ԽԱՉ

Առաջին երեք դարերում քրիստոնէաները հալածանքների էին ենթարկոււմ իրանց քրիստոնէական հաւատի համար: Այդ ժամանակամիջոցում շատերը մարտիրոսական մահ ընդունեցին: Հոովմայեցոց կայսր Կոստանդիանոս մեծի ժամանակ հալածանքները

դադարեցին: Նա քրիստոնէաներին իր հովանաւորութեան տակ առաւ և քրիստոնէութիւնը յայտարարեց պետական կրօն: Կոստանդիանոս կայսրը բարեպաշտական ջերմեօնանդութիւնից շարժուած՝ կամեցաւ գտնել այն խաչը, որի վրայ խաչուած էր Յիսուսը:

Այս նպատակով նա 326 թուին իր մայր՝ Թագուհի Հեղինէին ուղարկեց Երուսաղէմ: Երկար հարց ու փորձից յետոյ՝ նրա մօտ բերին մի հրէա, Յուդա անունով, որը ցոյց տուեց Յիսուսի խաչի տեղը: Խաչի թաղուած տեղը կառուցած էր մի կոատուն: Հեղինէ Թագուհին հրամայեց քանդել կոատունը: Այդտեղ գտան շատ նման երեք խաչեր և նրանց մօտ մի տախտակ հետևեալ մակագրութեամբ. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»: Պէտք է իմանային, թէ երեք խաչերից ո՞րն էր Յիսուսի խաչը: Իներին մի հիւանդ կին, որը հերթով երկրպագեց խաչերին: Առաջին երկուսին երգրպագելով՝ ոչինչ չպատահեց, իսկ երբ երրորդ խաչին երկրպագեց, իսկոյն բժշկուեց:

Յետոյ խաչերը մէկը միւսի ետևից դրին մի ննջեցեալի վրայ: Խաչերից երկուսը ոչ մի հրաշք չգործեցին, իսկ երբ դրին երրորդը՝ իսկոյն մեռեալը յարութիւն առաւ:

Թագուհին և հոգևորականութիւնը իմացան, որ նա Յիսուսի իսկական խաչափայտն է և սկսեցին երկրպագութիւն տալ ու համբուրել:

Գիւտ Խաչի տօնը կատարոււմ ենք հոկտեմբեր ամսում:

Վ Ե Ր Ջ

ԱՄԲՈՂԶ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ,
 ա, 6, Գ, Դ, Ե, Յ, Յ, Կ, Թ, Ժ,
 Ի, Լ, Խ, Ս, Կ, Ն, Ը, Դ, Զ, Ը,
 И, Л, Х, Ш, К, Ч, П, Р, С, М,
 յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,
 , Н, Ш, ВО, Ч, П, Р, С, В,
 ա, բ, ց, լ, փ, ղ, և, օ, ֆ:
 Т, Р, Ц, П, К, Е, В, О, Ф.
 ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ,
 Ի, Լ, Խ, Ս, Կ, Ն, Ը, Դ, Զ, Ը,
 յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,
 ա, բ, ց, լ, փ, ղ, և, օ, ֆ:
 Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ,
 Ծ, Կ, Զ, Է, Ը, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ,
 Զ, Ռ, Ս, Վ, Տ, Բ, Յ, Ի, Փ, Գ, Օ, Ֆ:

Սուրբ Աստուած, սուրբ եւ հփօր,
 սուրբ և անմահ, որ խաչեցար
 վասն մեր, ողորմեա մեզ:

Ա. Մ Ա Ս

Բառեր աղօթքների

1. Անուն **Имя**
 Հայր **Отецъ**
 Որդի **Сынъ**
 Սուրբ **Святой**
 Հոգի **Духъ**

2. Մեր **нашъ**
 երկինք **небо**
 եղիցի **да будетъ**
 քո **твое**
 եկեցէ **да придетъ**
 արքայութիւն **царство**
 կամք **воля**
 որպէս **какъ**
 երկիր **земля**
 հաց **хлѣбъ**
 հանապազորդ **насущенный**
 սուր **дай**
 մեզ **намъ**
 այսօր **сегодня**
 թող **оставъ**
 պարտ **долгъ**

մեր **мы**
 պարտապան **должникъ**
 մի տանիր **не введи**
 փորձութիւն **искушение**
 փրկեա **избавь-спаси**
 Հար **злой**
 զօրութիւն **сила**
 փառք **слава**
 յաւիտեան **во вѣки**

3. Ամենաբարի **пре-
благий**

Աստուած **Господь**
 առաքեալ **ниспосли**
 շնորհ **благодать**
 պարգև **даръ**
 միտք **разумъ**
 կազդուրել **укрѣплять**
 ընդունել **принимать**
 աւանդել **преподавать**
 ուսում **учение**
 զարգանալ **развиваться**

ստեղծող создатель
 մխրթարութիւն утѣ-
 шеніе
 ծնող родитель
 օգուտ польза
 եկեղեցի церковь
 հայրենիք отечество

4. Գոհանամբ Бла-
 годаримъ
 արժանի արարերը спо-
 добилъ
 օրհնեա՞նъ благослави
 մեծատուր начальникъ
 ուսուցիչъ учитель
 առաջտորդելъ руково-
 дить
 գիտութիւնъ знаніе
 կարողութիւնъ сила,
 мощь
 շարունակելъ продолжать

5. Աչք око
 ամենեցունъ всѣхъ
 յոյս надежда, упованіе
 կերակուրъ пища

ժամъ часъ
 բանալъ открыть, отверзать
 լցնելъ наполнять
 քաղցրъ сладкій

6. Լիութիւնъ обиліе
 սեղանъ столъ
 անհատъ неизсякаемый
 աննուազъ неубавляемый

7. Թագաւորъ царь
 կայսրъ императоръ
 զաւակъ чадо
 զօրքъ войско
 խաղաղութիւնъ миръ

8. Հայրապետъ пат-
 ріархъ
 աթոռъ престолъ
 էջմիածինъ Эчмиадзинъ
 (сошествіе Единороднаго)
 զահակալъ занимающій
 престолъ
 սրբազնագոյնъ святѣй-
 шій
 պարծանքъ хвала

ԲԱՌԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ

1. Մկրտիչъ Крести-
 тель
 ծնունդъ рождество
 հրէայъ еврей
 ժամանակъ время
 ապրելъ жить
 քահանայъ священникъ
 կինъ жена, женщина
 արդարъ праведный
 ծերъ старый
 միշտъ всегда
 աղօթելъ молиться
 խնդրելъ просить
 տաճարъ храмъ
 կատարելъ совершать
 ժամակարգութիւնъ бо-
 гослуженіе
 հերթъ очередь
 խորանъ придѣлъ
 երևալъ явиться
 հրեշաակъ ангель
 վախենալъ бояться
 ասելъ сказать
 սրելъ слышать

ծնելъ родить
 անունը կղնես нарече-
 чешь
 ճանապարհъ дорога, путь
 պատրաստելъ пригото-
 вить
 պատասխանելъ отвѣтить
 չէ կարողъ не можетъ
 պատահելъ быть
 համբъ нѣмой
 կատարուելъ исполняться
 ժողովուրդъ народъ
 դուրսը внѣ
 սպասելъ ждать
 կարողանալъ умѣть
 խօսելъ говорить
 հասկանալъ понять
 տեսիլքъ видѣніе
 դառնալъ вернуться

2. Կոյսъ дѣва
 բարեպաշտъ благочесті-
 вый
 ունենալъ имѣть

խոստանալ обѣщать
վարդի даръ
նուիրել подарить
համբերութիւն терпѣ-
 ніе
արժանացնել удостоить
աղջիկ дочь
անունը զնել назвать

3. *Շտապել* поспѣ-
 шить

կանչել звать
ազգական родственникъ
ընկերուհի подруга
հագցնել одѣть
շոր (հագուստ) одежда
հոգևոր երգ духовная
 пѣсня

տանել вести
մուտք входъ
զիմաւորել встрѣчать
քահանայապետ перво-
 священникъ
թելադրութիւն вну-
 шеніе

ուղղակի прямо
սրբութիւն սրբոց свя-
 тое святыхъ

իրաւունք право
տարի годъ
միայն только

պարապել заниматься
ընթերցանութիւն чте-
 ніе
ձեռագործ рукодѣліе

4. *Աւետումն* Благо-
 вѣщеніе

ապրել жить
մեռնել умереть
մնալով оставшиє

որը сирота
ամբողջ հոգևով всею
 душою

սիրել любить
ուխտել обѣщать
ուզենալ захотѣть
ամուսնացնել выдать
 замужъ

յանձնել поручить
կերակրել кормить
հարուստ богатый

պարապել заниматься
հիւսն плотникъ
մէկ անգամ однажды
քեզ հետ է съ тобою

շարունակել продолжать
խոնարհ покорно
ընդունել принять
հեռանալ удалиться

5. *ու. Համաձայն*
 согласно

երեխայ дитя
տալ дать
կամենալ захотѣть
անուանել позвать
բայց но
հակառակ էր быть про-
 тивъ

նշաններ знаки
զիմել обратитиcя
պահանջել требовать
տախտակ дощечка
բարձրաձայն громо-
 гласно
պապանձուել обѣмѣть
լեզու языкъ

ու. Վարուժ էր вель
զրկուելով лишившиєcя
մատաղ հասակից съ
 юныхъ лѣтъ

անապատ пустыня
պահք постъ
հագուստ одежда
ուղա верблюдъ
բուրթ шерсть
դօտի поясъ
մարախ окриды
վայրենի дикій
մեղր медъ

քարոզել проповѣдывать
ապաշխարեցէք покай-
 тесь
մօտենալ приближаться
մարգարէ пророкъ
զղջալ каются

6. *Իշխանութիւն*
 власть

լիմանալ узнать
հպատակ подданный
հրամայեց велѣлъ
լւրբարանչիւր каждый
նախնիքներ предки
ցեղ родъ
բնակարան помѣщеніе
պատասպարուել прию-
 титься

այր нещера
եղանակ погода
փաթաթել пеленать
խանձարուր пелѣнка
մնուր ясли
յանկարծ вдругъ
շրջապատուած окру-
 женный
անսովոր необыкновен-
 ный

հնչեցնել оглашать
օդ воздухъ
բարձրուժք въ вышнихъ

պատմել *разсказать.*

7. Քառասներորդ

սороковой
ըստ սովորութեան *по привычке*

անդրանիկ արու գա-
լակ *сынъ первенецъ*
մատաղ *жертва*

զոյզ *пара*
աղաւնի *голубь*

ծերունի *старецъ*
երկիրգած *благочестивый*

հանգիստ *спокойно*

Աստուածընկալ *Бого-применъ*

ամ *годъ*
այրի *вдова*

հեռանալ *удалиться*

ջերմեռանդութիւն *у-сердце, Благоговѣние*

արժանացրեց *удостоилъ*

8. Մկրտութիւն

крещеніе
հրամայեց *приказалъ*

կողմ *край, страна (сто-рона)*

դզրգացնող *громовой*
շարժում էին *потрясали*

անկեղծ *искренно*

սակայն *однако*

խիկոյն *точно*
անարժան *недостойный*

օրէնք *законъ*
քանդել *нарушать*

լրացնել *исполнять*

խոստովանուել *исповѣ-дывать*

անմեղ *невинный*
կերպարանք *видъ*

յայտնութիւն (Աստու-
ծոյ) *Богоявленіе*

Երրորդութիւն *Троица.*

9. Հարսանիք

свадьба
հրաւիրուած էին *были приглашены*

փեսայ *женихъ*
խեղճ *бѣдный*

բաւականին *достаточно*
հիւրասիրել *угощать*

նկատել *замѣтить*
նորապսակների *ново-брачные*

տիրել *печалиться*
հրաշք *чудо*

պատուիրեց *приказалъ*
զատարկ *пустой*

սափորներ *сосуды*

հրամայել *приказать*

(*велѣтъ*)

լցնել *наполнять*
կառավարիչ *распоряди-тель*

համ *вкусъ*
հաւանել *нравиться*

զառնալ *обращаться*
առաջ *сперва*

ապա *потомъ*
հաւատացին *увѣрвали.*

10. Դռներ

ворота
Երիտասարդ *юноша*
զագաղ *гробъ*

խղճաց *сжалился*
ներկայ եղողները *при-сутствующие*

յայտնուել է *появился*

այցելութիւն *арав* *по-сѣтилъ*

11. Նրա հետ

съ нимъ
շատ *множество*
մտակայ *близлежащій*

զանեղ *найти*
աւանակ *молодой осель*

փռել *постилать*
լուր *слухъ, молва*

տարածել *распростра-нить*

նրա դիմաց *наветвѣчу*

ему

ահագին բազմութիւն *громадное множество*

ոտքեր *ноги*
ձիթենու ձիւղեր *олив-ковья вѣтви*

կարատել *рѣзать*

ձգել *бросать*
ուղեկցել *сопровождать*

պատահել *ветрѣчать*
ոփսաննա *осанна (спасо-ние)*

ամբողջ *весь*

գզրդալ *грохотать*
չճանաչել *не знать*

մարգարէ *пророкъ*
վաճառական *купецъ*

հիւանդ *большой*
բժշկել *исцѣлить*

12. Մտածել

думать
կորցնել *погубить*

վճռել *рѣшить*
խորամանկութեամբ *хитростью*

միայն *только*
տօն *праздникъ*

խռովութիւն *возмущеніе*
երկալ *явиться*

մատնել *предать*

առաջարկել предложить
արծաթ серебро
համաձայնուել согла-
ситься

յարմար удобный
որոնել искать

13. Ոսկուայ омо-
веніе ногъ (въ великій
четвергъ)

հինգշաբթի четвергъ

առաւոտ утро

հարցնել спросить

հրամայել велѣть, при-
казать.

պատէք пасха

այնտեղ тамъ

պատահել встрѣтить

ջրկիր водозъ

հեռակել նրանъ слѣ-
довать за нимъ

տէր хозяинъ

մանել зайти

վարդապետъ учитель

սենեակъ комната

ցոյց ապա показать

պատրաստել пригото-
влять

երեկոյ вечеръ

ընթրիք ужинъ

հանել снять

վերևի верхнее

սրբիչ полотенце

սկսել начать

լուանալ умывать

կոնք умывальный тазъ

սրբել стирать

օրինակъ примѣръ

ապշել поражаться

զարմանալ удивляться

միթէ развѣ

սիրելի любимый

մօտենալ подойти

ցածր ձայնով тихимъ
голосамъ

կտորъ кусокъ

պատառъ клочокъ

թնթախել обмокнуть

ամանъ сосудъ

խսկոյնъ тотчасъ

հասկանալ понять

ուղարկել посылать

14. Խորհրդաւոր

(երեկոյ) Тайная вечеря

վերջացնել окончить

սկսեց (կատարել)

приступилъ

հաղորդու թիւնъ прича-
щеніе

հացъ хлѣбъ

կտրել преломить

առէք, կերէք примите,
кушайте (ѣдите)

մարմինъ тѣло

բաժակъ чаша

խմել пить

արիւնъ кровь

թափել (արիւն ե այլն)
изливать

յիշատակъ память

սաղմոսъ псаломъ

սարъ гора

15. Տանջանքъ стра-
даніе

պարտեզ, այգի садъ

մահъ смерть

ախրելъ печалиться

մի փոքրъ не много

ծունկъ коѣно

չոքելъ стать на колѣни

դաւրъ горькій

կրկնելъ повторять

քնելъ спать

զարթեցնելъ будить

բազմաթիւъ множество

զինուորъ воинъ

ծառայъ слуга

համբուրելъ цѣловать

բարևъ здравствуй

կամենալъ захотѣть

պաշտպանելъ защищать

արգելելъ запрещать

կամաւորъ добровольно

16. Մութ գիշերъ
темная ночь

դատաւորъ судья

հաւաքուելъ собраться

կանչելъ звать

վկայъ свидѣтель

պատառոտելъ разодрать

կարիքъ нужда

անձամբъ лично

անարգելъ хулить

միաձայնъ единогласно

մահուան արժան է до-
стоенъ смерти

դատապարտելъ осудить

վճիւրъ приговоръ

զործադրելъ привести въ
исполненіи

անմեղъ невинный

արձակելъ отпустить

զրգմամբъ по наущенію

պահանջելъ требовать

որպէսզի utoбы

հանդարտեցնելъ успо-
коить

յանձնելъ передать

ծեծъ бичеваніе

հանելъ снять

կապելъ привязать

սիւնն столбъ
 ծաղրը наемѣшка
 փշեայ колочիի
 պսակъ вѣнецъ
 Թագաւորական գա-
 ւազանъ скипетръ
 հասարակъ простой
 Թակելъ бить
 Թքելъ плевать
 արիւնաթաթախъ окро-
 вавленный
 կարծելովъ думая
 կատաղելъ освирипѣть
 արձակելъ отпустить
 բարեկամъ другъ
 խառնակուժիւնն волно-
 ние
 սաստկանալъ усиливать-
 ся
 խաչելъ распять
 17. Աւագակъ раз-
 бойникъ
 հրամանն приказъ
 ամբաստանելъ прибить
 գրութիւնն надпись
 կանգնելъ стоять
 վիրաւորանքъ оскарбле-
 ние
 շարունակելъ продол-
 жать

ուրիշъ другой
 իջնելъ сойти
 ընդունելъ признавать
 յիշիրъ помани
 դրախտъ рай.
 18. Մահъ смерть
 ժամъ часъ
 հաշիւъ счетъ
 յանկարծъ вдругъ
 սաստկանալъ усиливать-
 ся
 անտանելի նестерпимый
 շոգъ жара
 ուժաթափուելъ изнемо-
 жение
 Թաթախելъ обмокнуть
 ճաշակելъ вкусить
 քացախъ укусъ
 աւանդելъ (հոգին) от-
 пустить (духъ)
 խոնարհեցնելъ прекло-
 нять
 վարագոյրъ занавѣсъ
 պատառելъ разодрать
 վերեւիցъ сверху
 մինչև ներքև до низу
 շարժուելъ (երկրաշար-
 ժի ժամանակ) пот-
 ряса
 Ժայռъ скала

հարիւրապետъ сотникъ
 ներկայ լինելъ присутст-
 ճիշտъ точно
 արսուրъ грустно
 հարուածում էինъ били
 կուրծքъ грудь
 խնդրելъ просить
 սրունքները голени
 ջարդելъ перебить
 հաստատъ точно, осно-
 նիդակъ копье
 կողъ бокъ
 ծակելъ пронзить
 19. Թաղումը погребение
 ծածուկъ тайный
 Թոյլ տալъ позволять
 Թաղելъ похоронить
 տեղեկանալъ узнать
 կտաւъ бязь (плащаницу)
 գանազաննъ разный
 անուշահոտъ благовонный
 իւղъ масло
 իջեցնելъ снять
 օծելъ помазать
 մուտքъ входъ
 երկիւղ կրելովъ опасаясь
 գողանալъ воровать
 յիշելъ вспомнить
 պահպանելъ охранять
 պահապանъ сторожъ
 կնքելъ запечатать
 20. Յարութիւնն Воскре-
 սեւ
 վաղъ рано
 իջնելъ сойти
 պլորելъ отвалить
 ձիւնն սե՛ցցъ
 խոստանալъ обѣщаться
 կաշառքъ взятка, под-
 քնելъ спать
 ստանալъ получить
 սարսափահարъ обѣятый
 ужасомъ
 լուսաբացինъ на раз-
 աջъ правый
 կողմъ сторона
 պատանի юноша
 պատահելъ встрѣчать
 անյայտանալъ исчезнуть
 21. Համբարձումը
 Вознесение
 երբեմնъ иногда
 սովորեցնելъ учить
 քարոզъ проповѣдь
 հեռանալъ удалиться
 խրատъ наставление
 բարձրացնելъ поднять
 լուսաւոր սե՛վտուօ
 ամպъ облако
 ծածկելъ скрыть
 գովելъ хвалить

22. Դարձան возвратились
 շարունակ постоянно,
 հաւաքուել собираться
 վերնատունն горница
 անհամբեր съ нетер-
 пѣніемъ

յիսունн пятьдесятъ
 փչել дуть
 բամի вѣтеръ
 լցնել наполнять
 կարմիր красный
 հրեղէն огненный
 լեզու языкъ
 դանազան разныя
 օտար чужой
 դարմանակ удивляться
 պարգև даръ
 ապաշխարեցեք покай-
 тесь

23. Վերափոխում
 ասրացնել укрѣплять

վիշա скорбь
 անբարխուռթ. несчастіе
 ցանկութիւն желаніе
 անսովոր необыкновен-
 ւոր ый
 պատել окружить
 փառաւոր славный

հանդէս торжество
 զերեզման могила
 երկրպագել поклонять-
 յանկարծ вдругъ ся
 կատարել исполнять.

24. Գիւտ, գտնել

դար վեգъ нахождение
 հալածանք гоненіе
 հաւատ вѣра
 Այդ ժամանակամիջո-
 ցումъ въ это время
 մարտիրոսականн муче-
 ническая

դադարել прекратиться
 հովանաւորել покрови-
 тельствовать
 յայտարարել объявлять
 ջերմեռանդութիւն у-
 сердіе, благоговѣніе
 Յպատակ пѣль

Թագուհի царица
 կառուցել выстроить
 կռատունн языческій
 ասրացնել укрѣплять
 ասրացնել укрѣплять
 վիշա скорбь
 անբարխուռթ. несчастіе
 ցանկութիւն желаніе
 անսովոր необыкновен-
 ւոր ый
 պատել окружить
 փառաւոր славный

հմանн схожіе, похожіе
 հիւանդ больной
 հերթ очередь
 բժշկուել вылѣчиться
 հոգևորականութիւն
 ասրացնել укрѣплять
 վիշա скорбь
 անբարխուռթ. несчастіе
 ցանկութիւն желаніе
 անսովոր необыкновен-
 ւոր ый
 պատել окружить
 փառաւոր славный



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Գրվել՝ Տավրոպոլ Կավկազսկիյ. Արмянскому
Священнику Теръ Сааку Теръ Ованнисянцъ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0157601

1648